Գրադարանի կանոնակարգ

Գյոթե ինստիտուտ Հայաստանի գրադարանը հասանելի է բոլոր այցելուների համար անվճար։ Տեղում օգտվելը հնարավոր է նաև առանց գրանցման։

Գրանցում

Բոլոր նրանք, ովքեր ունեն մշտական բնակության վայր Հայաստանում, կարող են գրանցվել գրադարանում և ստանալ ընթերցողի քարտ, որի միջոցով կարող են մեդիաներ վերցնել տուն։ Գրանցման համար անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ։ Գրադարանի ընթերցողական քարտը անձնական է և չի կարող փոխանցվել այլ անձի։ Ձեր ստորագրությամբ Դուք ընդունում եք գրադարանի օգտագործման կանոնակարգը։

Տացք

Գրքեր վերցնելու համար անհրաժեշտ է ունենալ ընթերցողի քարտ։ Գրքերի տրման ժամկետը երկու շաբաթ է, որը կարող է երկու անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ երկու շաբաթով, եթե տվյալ նյութը նախապես ամրագրված չէ մեկ այլ ընթերցողի կողմից։

Ամրագրումներ

Դուք կարող եք ամրագրել արդեն տրված մեդիաները։ Երբ դրանք կրկին հասանելի դառնան, Դուք կստանաք համապատասխան ծանուցում։ Այնուհետև կունենաք մեկ շաբաթ ժամանակ՝ դրանք վերցնելու համար։

iPad-ների օգտագործում

Գրադարանի այցելուները կարող են օգտվել գրադարանի iPad-ներից գրադարանի տարածքում: Սակայն iPad-ները չեն տրամադրվում ընթերցողներին դուրս տանելու համար:

Onleihe (թվային գրադարան)

Բացի գրադարանում առկա մեդիաներից, Դուք կարող եք նաև անվճար օգտվել էլեկտրոնային մեդիաներից: Դրա համար խնդրում ենք մեկ անգամ գրանցվել հետևյալ հղմամբ:

Գրադարանի ներքին կանոնակարգ

Գրադարանի աշխատակիցները գրադարանի տարածքում իրականացնում են ներքին կանոնակարգի պահպանման վերահսկողությունը:

Բացառում

Օգտատերերը, որոնք բազմիցս խախտում են գրադարանի օգտագործման կանոնները, կարող են ժամանակավորապես կամ մշտապես զրկվել գրադարանից օգտվելու իրավունքից:

Վնասում և կորուստ

Վնասված կամ կորցրած գրադարանային մեդիաները փոխհատուցվում են ընթերցողի կողմից: Այն գրքերի համար, որոնք այլևս հասանելի չեն վաճառքում, գրադարանը սահմանում է համապատասխան փոխհատուցման գումար: